

ԱԿԱՆԱՎՈՐ ՀԱՅԱԳԵՏՃ

Այլ ուղին սկսվել է հայոց բնաշխարհի գունեղ մի անկյունից և երբեմնի հողագործ պատանուն բազմեցրել հայագիտության ամենականավոր այրերի կողքին:

Էդուարդ Բագրատի Աղայանը ծնվել է 1913 թ. մարտի 15-ին, Մեղրիում: Սովորել է տեղի յոթնամյա դպրոցում, որն ավարտել է 1928 թ.:



1930 թ. ուսումը շարունակել է Մեղրու կուլտնոստում:

1933 թ. է. Աղայանն ընդունվել է Երևանի համալսարանի պատմա-լեզվագրական ֆակուլտետը: Նրա արտակարգ ընդունակությունները բանասիրական առարկաների բնագավառում՝ չէին կարող սկզբից ևնթ դասախոսների ուշադրությունը չգրավել: Եվ 1938 թ. ավարտելով համալսարանը, հաջորդ ուսումնական տարում հրավիրվում է դասախոսելու նույն ֆակուլտետում:

Այդպես 1938 թ. սկսվում է է. Աղայանի մանկավարժան-գիտական գործունեությունը: Միաժամանակ նա շարունակում է իր ուսումնառությունը՝ այս անգամ ասպիրանտուրայում, Հըրաչյա Աւետյանի ղեկավարությամբ:

1940 թ. լույս տեսավ է. Աղայանի (Գ. Ստեփանյանի «Երևանագիտություն») աշխատությունը՝ «Հայոց լեզվի օժանդակ ձեռնարկ», իսկ 1941 թ. համալսարան-

նի ռեֆերատական աշխատություններում: Հրապարակվեց երիտասարդ լեզվաբանի «Քննություն Մեղրու բարրառիչ ուսումնասիրությունը» (1954 թ. լրացված, լույս տեսավ «Մեղրու բարրառ» վերատառությամբ), որն իր գիտական բարձր արժանիքներով աներկբա դարձրեց. որ նրա «Երևան»-ը իր շատ նշանակալից խոսքն է ասելու հայագիտության բնագավառում:

Նույն՝ 1941 թ. է. Աղայանը այդ աշխատությունը պաշտպանում է իրրե թեկնածուական դիսերտացիա՝ ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան, ինչպես և դոցենտի կոչում:

Այնուհետև, է. Աղայանի հետաքրքրության առարկան է դառնում հայ լեզվաբանության պատմությունը՝ սկսած V դարից: 1944 թ. արդեն գրված էր հայ բազմադարյան լեզվաբանությանը նվիրված այդ առաջին աշխատությունը: Հաջորդ տարին է. Աղայանն այն պաշտպանում է իրրե դոկտորական դիսերտացիա, իսկ 1946 թ. ստանում պրոֆեսորի կոչում:

1953 թ. պրոֆ. է. Աղայանն ընտրվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, ինչպես և Երևանի համալսարանի ընդհանուր և համեմատական լեզվաբանության մեթոդների վարիչ:

Համալսարանում է. Աղայանը նախ դասավանդել է լեզվաբանության ներածություն, ապա գրաբար, լատիներեն, պարսկերեն, ընդհանուր լեզվաբանություն, լեզվաբանության պատմություն, Արևելքի ընդհանուր դրականություն, պարսից դրականություն, հնդեվրոպական լեզուների համեմատական քերականություն, հայերենի համեմատական քերականություն, կառուցվածքային լեզվաբանության հիմունքներ, հնդուրաբանություն: Այս լայն ընդգրկման հետ է. Աղայանի դասախոսությունների մի այլ հատկանիշը վերլուծական մտքի խորությունն է, փաստարկվածությունը:

Պրոֆ. է. Աղայանի գիտական վաստակը՝ նրա բազմաթիվ աշխատությունները՝ մենագրություններ, դասագրքեր ու ձեռնարկներ, հոդվածներ, առաջաբաններ, գրախոսություններ, նույնպես գիտնականի հետաքրքրությունների լայն ընդգրկման, բազմազանության մասին են վկայում: Այդ բազմազանության միջ նկատվում է երկու հիմնական ուղղություն՝ լեզվաբանություն

և արևելագիտություն: Մինչև 1950-ական թվականների վերջերը պրոֆ. է. Աղայանը այս երկու բնագավառներով զբաղվել է զուգահեռաբար, ապա բացարձակ գերակշռող դարձավ լեզվաբանությունը: Ճիշտ է, նրա «Իրվագներ Արևելքի գրականության պատմության» մեծարժեք աշխատությունը լույս տեսավ 1941 թ., բայց այն հիմնականում անցած տարիների աշխատանքի ու որոնումների արդյունքն է:

Լեզվաբանության բնագավառում պրոֆ. է. Աղայանի ավանդը բացառիկ է նա քննախույզ, անընդհատ որոնող, պրպտող, հղած տեսությունները վերաքննող, ճշգրտող, նոր տեսություններ սկզբնավորող լեզվաբան է: Եվ այս ասպարեզում էլ նրա գիտական հետաքրքրությունները բազմաբնույթ են՝ հայոց բարբառագիտության ամենատարբեր հարցերին նվիրված ուսումնասիրություններից մինչև լատիներենի դասագիրք, ժամանակակից հայերենի և հայ գեղարվեստական գրականության լեզվի զարգացմանը նվիրված ամենաարդիական հարցերի քննությունից մինչև ընդհանուր լեզվաբանության հին և նոր խնդիրների ուսումնասիրում, ստուգաբանական բազում պրպտումներից մինչև լեզվի ծագման հարցերի արծարծում, հնդեվրոպաբանության առեղծվածների լուսաբանումից մինչև արդի հայերենի բառարանի և քերականության գասագրքերի կազմում:

է. Աղայանի լեզվաբանական այս լայնածավալ աշխատանքներում նկատվում են երկու էական հատկանիշներ, որոնք ընտիվագրական են գիտնականի ամբողջ գործունեության համար: Առաջինն այն է, որ ինչ հարցի ուսումնասիրության էլ ձեռնարկում է պրոֆ. է. Աղայանը, լուծումը տալիս է մասնագիտական ամենաբարձր մակարդակով: Դա, հավանաբար, լեզվական բնատուր և ակնառու այն օժտվածության արդյունքն է, որը միշտ զարգացվում ու կատարելագործվում է գիտնականի աճննօրյա հսկայական աշխատանքով:

Երկրորդը այն է, որ է. Աղայանի լեզվաբանական բազմաբնույթ աշխատանքում կա մի առանցք կամ առանցքային ուղղություն: Դա հայոց լեզվի տարբեր դրսևորումների ու ժամանակաշրջանների ուսումնասիրումն է, որին ըստ էության ենթակա են գիտնականի մյուս լեզվաբանական աշխատանքները:

Պրոֆ. է. Աղայանը լեզվաբանության ներածությունն արհեստական դասագրքի հեղինակն է, որը լավագույնն է հայերեն երբևէ լույս տեսած ընդհանուր լեզվաբանական ձեռնարկների մեջ, բայց այդ աշխատությունը միաժամանակ զուտ հայագիտական մեծ արժեք ունի: Հին և նոր հայերենի հնչյունաբանության, բառագիտության,

քերականության բազմաթիվ հարցեր են արծարծված նրանում, հաճախ տրված են նոր լուծումներ ու մեկնաբանություններ:

է. Աղայանը միշտ եղել է համաշխարհային լեզվաբանական մտքի նորագույն նվաճումներին հաղորդակից և դրանք հայագիտության մեջ կիրառող ռահվիրաներից մեկը: Այսօր նա հանրապետությունում կառուցվածքային լեզվաբանության խոշոր մասնագետներից է, բայց դժվար չէ նկատել, որ այդ մասնագիտացման հիմնական նպատակը նորագույն լեզվաբանությունը հայագիտությանը ծառայեցնելն է Պրոֆ. է. Աղայանը տվել է հրաշալի օրինակներ, թե ինչպես պետք է կառուցվածքային լեզվաբանության լավագույն հատուցվածքները ստեղծագործաբար օգտագործել հայոց լեզվի ուսումնասիրման բնագավառում: 1964 թ. լույս տեսավ նրա «Գրաբարի քերականության» առաջին հատորի և հիմնարկ, որ նվիրված է դասական (մեսրոպյան) գրաբարի հնչյունաբանությանը: Աշխատության սկզբում է. Աղայանն առաջին անգամ հայ ընթերցողին ներկայացնում է նորագույն հնչյունաբանության գլխավոր սկզբունքները, ինչպես և շարադրում իր քննական կամ ստեղծագործական վերաբերմունքը նրանց նկատմամբ: Գրաբարի հնչյունաբանության քննությունը առաջ տանելով իր մշակած արդյունավետ եռանակով, է. Աղայանը հասել է աննախադեպ արդյունքի՝ ստեղծել հայագիտության հույակապ կոթողներից մեկը՝ դասական գրաբարի հնչյունական համակարգին նվիրված լավագույն երկը:

1967 թ. լույս տեսած «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» մեկնագրության մեջ է. Աղայանը երկու ընդարձակ դուխ հատկացրել է կառուցվածքային լեզվաբանության գլխավոր հատկանիշները, սկզբունքները, ուղղությունները հայ ընթերցողին ներկայացնելուն: Սա, անշուշտ, կարևոր ծառայություն է մեր լեզվաբանությանը: Մակայն ավելի կարևոր է աշխատության մեջ կառուցվածքաբանության սկզբունքների ստեղծագործական կիրառումը ժամանակակից հայոց լեզվի բայի ու գոյականի համակարգերը նախագրելու համար: Դեռևս 1963 թ. հրապարակած «Բայի ձևաբանական կառուցվածքը ժամանակակից հայերենում» և «Բայականությունը ժամանակակից հայերենում» հոդվածների մեջ է. Աղայանը նոր խոսք ասաց արդի հայերենի բայական համակարգը նկարագրելու բնագավառում: Նա ոչ միայն հայտնի լեզվական իրողությունները ներկայացնելու ասպարեզում կատարեց մի շարք էական ճշտումներ, այլ ցույց տվեց նաև, որ Ս. Պայասանյանի և նույնիսկ Մ. Արեղյանի ժամանակներից հետո հայերենի բայը փոփոխություններ է կրել, որոնք

պետք է ձգտումներ մտցնեն խոնարհման հարացույցում:

1966 թ. հայկական դպրոցների V—VII (այժմ՝ IV—VII) դասարաններում գործածության դրվեց հայոց լեզվի նոր դասագիրքը, որի հեղինակներից մեկը է. Աղայանն է (մյուսը՝ Հ. Բարսեղյանը): Դրանով դպրոցն ստացավ գիտական ամուր հիմք ունեցող արժեքավոր դասագիրք, որը վերջին տարիների փորձով հարուստացվելու և կատարելագործվելու շնորհիվ դարձել է հայոց միջնակարգ դպրոցի երեւէ ունեցած լավագույն ձեռնարկներից մեկը:

Է. Աղայանը, ինչպես ասվեց, հայ լեզվաբանության առաջին պատմաբանն է: Նա իր գիտելիքներն աշխատությունը հարստացնելուց և վերամշակելուց հետո հրատարակեց երկու հատորով (1958, 1962 թթ.)՝ «Հայ լեզվաբանության պատմություն» վերնագրի տակ: Աշխատության մեջ հայ լեզվաբանությունը ներկայացվում է Մեսրոպ Մաշտոցից մինչև 1960-ական թվականների սկիզբը, վերլուծվում և գնահատվում է հին, միջնադարյան, նոր և սովետական շրջանի բազմաթիվ լեզվաբանների աշխատանքը:

Հայ լեզվաբանական առարկային պրոֆ. է. Աղայանը գործուն մասնակցություն է ունենում. նա տարբեր ժամանակներում հանդես է եկել մի շարք արժեքավոր գրախոսություններով, մասնակցել է տարբեր բանավեճերի: Օրինակ՝ բարձր գնահատվեց նրա ամփոփիչ հոդվածը «Սովետական գրականություն» ամսագրում տեղ գտած ոճագիտական-լեզվական բնույթի բանավեճի առիթով: Կարևոր գեր ունեցավ նաև հայ բարբառներին նվիրված միութենական բանավեճի առթիվ է. Աղայանի հրապարակած հոդվածը:

Է. Աղայանը բազմաթիվ լեզվաբանական աշխատությունների և բառարանների խմբ-

բագիր է, բայց իրեն խմբագրի և կազմողի նրա դերը առանձնահատուկ է իր ուսուցչի՝ Հ. Աճառյանի գիտական ժառանգությունը հրատարակելու գործում: Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» 2-րդ մասը, «Գրաբարի ուսուցիչը», «Անձնանունների բառարանի» 4-րդ և 5-րդ հատորները, «Կյանքիս հուշերից»-ը, մանավանդ «Լիակատար քերականություն հայոց լեզվի» բազմահատոր հակայածվալ աշխատությունը խմբագրել է պրոֆ. է. Աղայանը: Դրանք սովորական խմբագրումներ չեն, այլ մեծ մասամբ նաև բնագրերի պատրաստում հրատարակություն համար, առանձին անավարտ հատվածների լրացում, իսկ որոշ կտորների ամբողջական շարադրում: Պրոֆ. է. Աղայանը մեծագույն գնահատանքի արժանի խնամքով ու երկյուղածությամբ է իր սերն ու երախտագիտությունը մատուցում սիրելի ուսուցչին. մեծ լեզվաբանին, նրա ջանքերով է, որ Աճառյանի գիտական ժառանգության մի ծավալուն մասը դարձել և դառնում է հայագիտության սեփականությունը:

Գիտությունից դուրս էլ լայն է պրոֆ. է. Աղայանի հետաքրքրությունների շրջանակը: Օրինակ, նա առաջնակարգ թարգմանիչ է. հիշենք Ա. Դյումայի «Քամելիազարդ տիկինը» և Ս. Այնիի «Բուխարա» վեպերի նրա կատարած գեղեցիկ թարգմանությունները:

Կյանքի յոթերորդ տասնամյակը ոտք դրած գիտնականը լի է այնպիսի եռանդով, որը կբավարարի նրա մեկը մյուսից հոյակապ ծրագրերն իրականացնելուն:

Համոզված ենք, որ նշանավոր գիտնականն այդ ծրագրերի իրականացումը նոր և մեծ ներդրում կլինի հայագիտության բնագավառում:

Ռ. Ա. ԻՇԽԱՆՅԱՆ